Արձանագրություն N 4
ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1 ծածկագրով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 դեկտեմբերի 2018թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին

(Տ.Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր չափաբաժնի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ.Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց՝ հաստատել սույն ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և գնման ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնում ընտրված մասնակից ճանաչել՝

Չափաբաժիններ 1 և 4 - <<Դոքս Քոմպյուտր>> ՍՊԸ-ին,
Չափաբաժիններ 2 և 3 - <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ.Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Դոքս Քոմպյուտր>> և <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ.Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

Արձանագրությունը կազմեց

հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան